

ղէն աներ: Պարոն Քաբրի քաղաքին մէջտեղը նոյն քարերով շինեց այն մեծ շէնքն որ այսօր Hôtel Langer կը կոչուի¹⁵⁸, որուն մնուանը մէկ դաստիկոն բարձր է¹⁵⁹: Այսպիսի դաստիկոնաչափ բարձր միջինդարեան մնուաններ, որոնց վրայ երբեմն Մոլտաւիոյ իշխանաց պալատը կար, կան Hôtel Langerէն 50 քայլ հարաւակողմն եղող տան տակ, որ երբեմն Hôtel de Moldavie կը կոչուէր, նոյնպէս այն մէկ դաստիկոն տան տակը, որ արեւելեան-յունական բարձրագոյն գիմնաստիոնին քով եւ Ս. Գեմետրիոս եկեղեցւոյն գիմնացն է¹⁶⁰: Տեղական բոմանական ականդութիւնը կ'ըսէ՝ թէ այս վերջին մնուան թէ Hôtel Langer ի եւ թէ Hôtel de Moldavie ի մնուաններուն հետ յարաբերութեան մէջ է, եւ թէ՛ գլխաւոր փողոցին եւ Ս. Գեմետրիոս եկեղեցւոյ տակէն անցնելով՝ կ'երթայ տեղ մը Սուչավա գետին մէջ կը հանէ: Այսպիսի գետնափոր, կոխածոյ քարէ շինուած եւ քարայատակ հին մնուանի մը բերանն կայ ցայժմ Հայոց ժողովրդապետական եկեղեցւոյն եւ Landwehr զինուորանոցին մօտ՝ Միքայէլ Աբրահամ Սուչավացւոյն պարտիզին մէջ:

Յամին 1776 Լեմպերկցի հայ վաճառականն Նիկորովիչ¹⁶¹ առաջարկեց Տաճկաստանէն եւ Մոլտաւիոյ Պոթուշան քաղաքէն շատ հայ ընտանիքներ Պուքովինա եւ ի Սուչավա գաղթական բերել այն պայմանաւ՝ որ Սուչավա քաղաքն վաճառականական ազատ քաղաք ըլլայ, ինչպէս Կալիցիոյ Պրոտի քաղաքը, զոր Յովսէփ